

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԴՊ, 30 ՅՈՒՆԻՍ, 1932

ԹԻԻ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Զափահասներու Կրթութիւն

Տ. Ճ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Բարեխօսութիւն եւ Երկրագութիւն

(Ա. ՄԸՐԷՅ)

Տարուին Մահուան Անկողնին Վրայ

(ԼԵՅՏԻ ՀՈՓ)

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ս. Գրոց Ուսումնասիրութիւն

ՎԵՐ. Հ. Հ. ՐԻԿՍ

Սինեմա եւ Կրթութիւն

ԲՐՈՑ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

Ասորեստանեայց Օրով Կիլիկիա

ՎԵՐ. Ե. ԳԱՍՈՒՆԻ

Խլիրդ

ՏՈՒԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԻճՅ Գիտեցի Տիեզերքի Վրայ

ԱՄՓՄ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

ԲրոՑ. Յ. Թ. Գայաեան եւ Եկեղեցի

Խ. ԿԻՒԶԵԼԻՄԵԱՆ

Բաժանումի Մ'առքիւ

ՏՈՒԹ. Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Շեմքի Մը Նուիրման Հանդեսը

ԲՐՈՑ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

Նոր Հանքն

Ս. ԳԸՐԳԵԱՇԱՐԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈԼԻՔ ՀԱՆԴՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգրեցե 150 ղրուշ
սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս
տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅԸ ԳՐԵՑ՝ ԿՈՍՄԱԳԵՆԱՑԻ

Կոմագենացիին հմուտ պատմագէտ
մըն է որ գիտէ հաճելի ոճով ներկայա-
ցընել անցեալի դէպքերը: Հատորս 15
գլուխներով գեղեցիկ և քննական ու-
սումնասիրութիւն մ'է Հայոց Պատմու-
թեան Կիլիկեան շրջանին սկզբնաւորու-
թեան մասին: Գիտն է 10 ֆրանք Սու-
րիոյ համար, կէս տոլար ուրիշ երկիր-
ներու համար: Ծաւալն է 95+ԺԶ էջ:
Դիմել «Նոր Աւետարեւոր»ի հասցէին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մամլութէնի Հայ Հիւածխտաւորաց
հիւանդանոցի խնամակալ վարչութիւնս
Ամերիկա և արտասահման գտնուող
բարեպաշտ և անձնուէր Հայ ժողովուր-
դին կուգայ յայտարարելու թէ անոնք
որ կը փափաքին Մամլութէնի բուժա-
րանին մէջ թոքախտի ճիրաններուն
տակ տուայտող եղբայրներուն նուէր
մը ղրկել, կրնան իրենց նուէրները ղըր-
կել խնամակալութեան Ամերիկայի
ներկայացուցիչ Տիար Մարտիրոս Կէրթ-
մէնեանի միջոցաւ, որուն հասցէն է
919 Columbia st. S. Pasadena (Calif-
ornia) և կամ Հայ Աւետարանչական
ընկերակցութեան հասցէով որ է 152
East 34th Street New-York N. Y. U.
S. A.

Մամլութէնի Ազգ. բուժարանի խնա-

մակալութիւն

Անդամ

Նախագահ

Ենթվ. Յ. Հատիտեան

ԵՂԻՇԷ ԱՐԲ. ԵՊԻՍ ԿԱՐՈՅԱՆ

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»Ի ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան
համար կրթիչ գիրքերու պակասը խիստ
զգալի է: Այս կէտը նկատի առնելով
«Նոր Աւետարեւոր»ի խմբագրութիւնը այս
տնգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՑԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունա-
կէ խիստ հետաքրքրական և բարոյա-
ցուցիչ 15 իրական պատմութիւններ և
պատմաւածքներ: Ամէն պատանի, ինչ-
պէս նաև դաստիարակներ և ծնողներ
չատօգտակար պիտի գտնեն զայն: Գիտն
է 25 ղրշ. սուրիական (կամ 50 սէնթ Ա-
մերիկայի և Եգիպտոսի համար): Դիմել
խմբագրութեան հասցէին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԳՐՈՒԱԳՆԵՐ ԿԵԱՆՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Տոքթ. Ա. Նազգաշեան 115 էջերէ
բաղկացեալ այս հատորին մէջ իրեն յա-
տուկ զուարճախօսութեամբ և սրամտու-
թեամբ կը պատմէ իր կեանքին կարգ
մը դրուագները մանկութեան շրջանէն
սկսեալ մինչև հիմա: Գիտն է Ամերի-
կայի համար 50 սէնթ և ուրիշ երկիրնե-
րու համար 6 ֆրանք: Դիմել «Նոր Ա-
ւետարեւոր»ի հասցէին:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 30 ՅՈՒՆԻՍ, 1932

ԹԻԻ 10

ԶԱՓԱՀԱՄՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Յունիսի վերջը գրեթէ բոլոր գյուղացիները փակուած կ'ըլլան հոս: Մեծ թիւով նախակրթարանի և երկրորդական վարժարաններու ուսումնաւարտներ, ինչպէս ամէն տարի, այս տարի ալ կուգան ստուարացնել ուսեալ դասակարգի թիւը: Ասիկայ սփոփիչ պարագայ մը կրնայ նկատուիլ հայ իրականութեան մէջ: Հայերը ուսումնասէր և ռուսեալ ժողովուրդ մը նկատուած են: Անշուշտ մեծ ճշմարտութիւն մը կը պարունակէ այս իր մէջ: Բայց մենք այսօր կ'ուզենք հարցին միւս կողմն ալ ներկայացնել մեր ընթերցողներուն:

Մեր ուսեալ կոչուած, այսինքն գրել կարգալ գիտցող, դասակարգին մեծ մասը՝ առաւելապէս տնտեսական պատճառներով՝ նախնական ուսումով մը միայն ստիպուած է գործնական կեանքը մտնել: Եւ այս նախնական ուսումով մարդիկ գյուղացի շրջանէն ասդին գրեթէ ոչինչ աւելցուցած են իրենց իմացական պաշարին վրայ, անոնց դասփարները շատ քիչ փոփոխութեան ենթարկուած են: Երկրորդական ուսում ստացած անհատներէն շատերն ալ պէտք եղած չափով չեն կրցած հարստացնել իրենց հմտութիւնը, խորացնել իրենց գաղափարները զանազան պատճառներով: Նկատի առնելով որ չափահաս դասակարգն է որ կը վարէ ընկերային կեանքը, որչա՞փ կարեւոր կը դառնայ անոր տեւական զարգացումը: Այս, տեսական զարգացման սկզբունքը եթէ չկարենանք կիրարկել մեր կեանքին

մէջ, անհասկացողութիւնները աւելի լուռն և հինի ու նորի բաղխումները աւելի սաստիկ պիտի ըլլան: Մէկ կողմէն իրենց նախնական վիճակին մէջ քարացած միտքեր, որոնք սակայն յաճախ բացարձակ հեղինակի հովեր կ'առնեն, իսկ միւս կողմէն միշտ ձեւընկալ, նոր լոյսները ընդունելու միշտ ընդունակ յարածուն միտքեր չեն կրնար ներդաշնակ հաւաքականութիւն մը յառաջ բերել:

Ահա այս կէտը ուշադրութիւն կը դրաւ նոյն իսկ շատ մը զարգացեալ երկրներու մէջ, ուր «չափահասի կրթութիւնը աւելի կարեւոր է քան մանուկները» կը ձայնեն: Եւրոպական և ամերիկեան երկրներու մէջ, ուր յետընթացաւարտի դասընթացքներ, տեւական զարգացման շատ մը դիւրութիւններ կան և ընթերցասիրութիւնը մեծ ծաւալ գտած է ժողովուրդին մէջ, եթէ չափահասներու կրթութիւնը օրուայ պահանջ մը կը նկատուի, որքա՞ն աւելի ճիշմարիտ է այն մեզի համար:

Չափահասներու դաստիարակութեան միջոցներ են՝ մեր կրօնական և աշխարհական բեմերը և մամուլը: Բայց որպէսզի մամուլը իր նպատակին ծառայէ ժողովուրդը ընթերցաւոր պէտք է ըլլայ: Եթէ կարելի ըլլար ճշգրիտ պատասխան մը տալ սա հարցումներուն թէ մեր ժողովուրդը ի՞նչ, որչա՞փ և ինչպէ՞ս կը կարդայ, կարող պիտի ըլլայինք որոշ չափով մը և ստոյգ կերպով գիտնալ անոր միտքին և սիրտին խորութիւնը: Բայց անվերապահ կերպով կրնանք ըսել թէ

ընթերցասիրութիւնը աւելի պէտք է տարածուի մեր մէջ, ընթերցասիրութեան օւնակութիւնը կանուխ հասակէն պէտք է մշակուի և զօրացուի:

Հոսկ' ուզենք յիշել տարի միջոց մ'ալ: Մեր հիկեղեցիները կրնան մէկ մէկ մշակութային մարմին ստեղծել, նպատակ ունենալով գեղարուեստական հանդէսներով, և ամէն տեսակ նիւթերու առօրեայ տեղական և համաշխարհային հարցերու մասին խնամեալ ճառերով զար-

գացնել իրենց ժողովուրդը: Եթէ ունէ տեղ մը մէկէ աւելի հիկեղեցիներ կան նոյն նպատակով կրնան գործակցել: Ահա այս պատճառով ուրախութեամբ կ'արձանագրենք Հալէպի մէջ, այս ամիս, Նիկիպլիտան Թանգարանի բացման հանդէսը, և կը յուսանք որ հաստատութեանս վարչութիւնը պիտի ջանայ յաջողութեամբ մշակութային ծրագիրը իրագործել իր կարողութեան սահմանին մէջ:

Տ. Ժ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԲԱՐԵՒՍՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ

«Սուրբ հանդեսով Տերոցը ներպագում քիւն ըրիք:» Սաղմոս 96. 6:

Որքա՛ն լաւ ճանչնանք զԱստուած այնքա՛ն աւելի հիանալի կ'ըլլայ բարեխօսութեան ոյժին մեր թափանցողութիւնը: Մենք կ'սկսինք հասկնալութէ ան մեր միջոցն է որով մենք Աստուծոյ նպատակին իրագործման մէջ բաժին կ'ունենանք: Աստուած իր ժողովուրդին վստահած է Քրիստոսով փրկակագործութեան բոլորը մարդոց ճանչցնելու և անոնց հաղորդելու համար: Այս բոլորին մէջ՝ բարեխօսութիւնը գլխաւոր և էական տարրն է, քանզի անոր միջոցաւ է որ իր ծառաները Քրիստոսի հետ կատարեալ հաղորդակցութեան կը մտնեն, և Հոգիի և Երկինքի ոյժը կ'ստանան իբր իրենց ոյժը ծառայութեան:

Դիւրին է հասկնալ թէ ինչո՛ւ Աստուած այսպէս կարգադրած է: Աստուած ամէն արարքով կը փափաքի մեզ վերանորոգել իր պատկերին և նմանութեան համեմատ: Բայց այս ընելու համար իր փափագները մերը ընելէ զատ ուրիշ ճամբայ չկայ, որպէսզի մենք իր տրամադրութիւնը արտաբե-

րենք. և սիրով ինքզինքնիս զոհենք որպէսզի չափով մը կարենանք նոյնիսկ Քրիստոսի նման, «միշտ կենդանի ըլլալ բարեխօսութիւն ընելու»: Այսպէս կրնայ ըլլալ նուիրեալ հաւատացեալի մը կիանքը:

Աստուծոյ այս մեծ փափագին խորը որչափ յստակ ըլլայ մեր թափանցողութիւնը, աւելի լաւ պիտի զգացուի՝ խոնարհ ներկայագութեան և սուրբ պաշտումի հոգիով Աստուծոյ հետ իրապէս հաղորդակցութեան մտնելու պէտքը: Աստուծոյ ներկայութեան մէջ մնալու, Անոր միտքին և կամքին կատարելապէս թափանցելու, մեր բոլոր էութեամբ Անոր փառաւոր նպատակին մտածումովը լեցուելու համար օրչափ աւելի ժամանակ տանք, մեր հաւատքը աւելի զօրաւոր պիտի ըլլայ թէ Աստուած ինքը մեր աղօթքներուն միջոցաւ իր կամքին բոլոր բարեհաճութիւնը պիտի կատարէ: Երբ Աստուծոյ փառքը մեր վերայ կը ճառագայթէ, մենք մեր ակարութեան, խորութեան կը զիտակցինք, և այսպէս կը բարձրանանք հաւատալու թէ Աստուած մեր խնդրել և խորհիլ կրցածէն վեր պիտի կատարէ:

Բարեխօսութիւնը պիտի առաջնորդէ զգալու աւելի խոր պաշտումի մը պէտքը: Պաշտումը բարեխօսութեան համար նոր ոյժ պիտի տայ: Ճշմարիտ բարեխօսութիւն մը և աւելի խոր պաշտում մը միշտ անբաժանելի պիտի գըտնուին:

Ճշմարիտ պաշտումի գաղափարը կը բնայ գիտնալ այն անձը որ Աստուծոյ ներկայութեան մէջ մնալու ժամանակ

կուտայ, և որ Աստուծոյ կը յանձնուի որպէսզի Ան յայտնէ ինքզինքը: Յիրաւի պաշտումը մեզ յարմար վիճակի մէջ կը դնէ Աստուծոյ փառքը ծանօթացնելու մեծ գործին համար:

«Ոհ, եկի՛ք երկրպագեմք եւ խոնարհիմք, ծուռն դնեմք մեր Տէր Առաջին սոցն, փակցի ինքն և մեր Աստուծոյ»:

«Տէրոջը տեղի իր անուանարժանի փառքը»:
(Ա. ՄԸՐԷԾ)

ՏԱՐՈՒԻՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՆԿՈՂՆԻՆ ՄԷՋ

Լէյտի Հոփ, ջերմեռանդ և նուիրեալ Անգլուհի մը, Նորթֆիլտի մէկ հաւաքոյթին մէջ, 1915 Օգոստոս 15ին, Տարուինի կրօնական կեանքին մասին անձնական տեսակցութեան մէկ նկարագրութիւնը ըրած է, որ ապա Ուայցմէնէֆգէմինը թերթին մէջ ալ հրատարակուած է. յօդուածը իր իսկ գրիչով գըրուած է:

«Աշնանային փառաւոր յետմիջօրէններէն մէկն էր, զոր երբեմն Անգլիոյ մէջ կը վայելենք, երբ փափաք յայտնուեցաւ որ ես ներս երթալով քաջածանօթ փրօֆէսոր Չարլըս Տարուինի քովը նշուտիմ: Իր մահէն մի քանի ամիսներ առաջ անկողնէն զրեթէ ազատած էր. ես միշտ այնպէս կ'ըզգայի թէ երբ զինքը տեսնէի, իր գեղեցիկ ներկայութիւնը մեր Արքայական Ակադեմիային համար վեհ պատկեր մը պիտի լինէր: Բայց երբեք այնքան զօրաւոր կերպով այսպէս խորհած չէի որքան այս մասնաւոր այցելութեան առթիւ: Անկողնի մէջ կը նստէր ծիրանեգոյն, փափուկ պարեգօտ մը հագած: Բարձրուն կը թնամ հեռուն տարածուող անտառները և ցորենի արտերը կը գիտէր, որոնք Քէնթի և Սըրէյի գեղեցկութիւնը կազ-

մող հիանալի արեւամարներու մէկուն լոյսովը կը ցոլցըլային: Իր ազնիւ ճակատը և նուրբ դիմագիծները հաճոյքով փայլիլ կը թուէին երբ ես ներս մտայ: Իր ձեռքը դէպի պատուհանը շարժեց երբ հեռակայ տեսարանը կը ցուցնէր, մինչ իր միւս ձեռքովը բաց Ս. Գիրք մը կը բռնէր զոր միշտ կ'ուսումնասիրէր:

—Խնչ կը կարգաք հիմա, հարցուցի ես երբ իր անկողնին քովը նստայ:

—Երբայեցեաց Թաւղթը, պատասխանեց ան, և զայն կը կոչեմ Արքայական Գիրքը: Անիկա վէհ է:

Ապա մատերը կարգ մը հատուածներու վրայ գնելով անոնց մասին մեկնաբանեց: Եւ ես՝ շատերու կողմէ արարչագործութեան պատմութեան և վեհութեան մասին արտայայտուած զօրաւոր կարծիքներու, և ապա Մենզոց Գիրքին առաջին գլուխներուն հանդէպ անոնց վերաբերումին ակնարկութիւն ըրի:

Անիկա մեծապէս յուզուած թուեցաւ իր մատերը կծկեց ջղային կերպով, եւ, դէմքին վրայ ներքին տանջանքը մատնող նայուածք մը գծուեցաւ և ըսաւ. «Ես չձեռակերպուած գաղափարներով երիտասարդ մ'էի: Ես հարցեր, թեւա-

դրութիւններ մէջ տեղ դրի մենոյն ատեն վարմանալով ամէն բանի վրայ. և ապա շեցայ երբ տեսայ որ զաղափարները կատաղի կրակի պէս տարածուեցան, ժողովուրդը անոնցմէ կրօնք մը չի նեցաւ:

Դադար մը առաւ. և Աստուծոյ սըրբութեան և այս Գիրքին վեհութեան մասին մի քանի նախադասութիւններ ևս ըսաւ, նայելով Ս. Գիրքին զոր միշտ գուրգուրանքով կը բռնէր ձեռքին մէջ և ապա շարունակեց:

— Պարտէզին մէջ ամառանոց մ'ուներիմ, ուր երեսուն մարդիկ կան: Անիկա հոն է, ըսաւ Տարուին պատուհանին մէջէն հեռուն ցուցնելով, շատ կը փափաքիմ որ դուն հոն խօսիս: Գիտեմ որ դուն գիւղերու մէջ Ս. Գիրք կը կարդաս: Վաղը կէսօրէ ետքը պիտի ուզէի որ աշխատողները, վարձակալները եւ զրացիներէն մի քանին հոն հաւաքուէին: Դուն կ'ուզե՞ս անոնց խօսիլ:

— Ի՞նչ բանի մասին պէտք է խօսիմ, հարցուցի:

— Յիսուս Բրիստոսի մասին, պատասխանեց յստակ և զօրաւոր ձայնով մը, և աւելի ցած ձայնով յարեց, և իր փրկութեան մասին: Հաւագոյն նիւթը այսչէ՞: Եւ ապա կ'ուզեմ որ անոնց հոգեւոր երգեր երգէք, և ձեր փոքր նուագարանովը անոնց կ'առաջնորդէք, այնպէս չէ՞:

Ես երբեք չպիտի մոռնամ այն պայծառ, ոգեւորեալ և հիանալի նայուածքը իր դէմքին վրայ մինչ այս կ'ըսէր. եւ ապա աւելցուց:

— Եթէ հաւաքայթը ժամը Յին ունենաւ այս պատուհանը բաց պիտի մնայ այն ատեն, և գիտցիր թէ ես երգեցողութեան պիտի մասնակցիմ:

Որչա՞փ կը փափաքէի որ կարողանայի գծել այդ ծեր լաւ մարդուն և իր գեղեցիկ միջավայրին մէկ պատկերը զոր տեսայ այդ յիշատակելի օրը:

ԿՐԹԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻՆԵՄԱ

Նախընթաց յօդուածով մը (Նոր Աւետ. Փետր. 15) կրթութեան նպատակ կը հռչակէինք՝ իր Արարչին պատկերովըն ստեղծուած բայց ինկած Մարդուն կատարելագործումը՝ մարմինի, միտքի եւ հոգիի ներդաշնակ զարգացման ճամբով: Հոս կ'արժէ անցողակի յիշել որ՝ հին և նոր պարսկերէնի մէջ *shams* (մարդ) բառը, ստուգաբանօրէն մեղանկի (մահկանացու) նշանակելէ զատ, սովորական առումով կը նշանակէ նաեւ քաջ, շիսակ՝ ազնիւ մարդ, որուն այնքան գեղեցկօրէն կը համապատասխանէ անգլ.

լիերէն gentleman բառը:

Կրթութեան նպատակը, ուրիշ ամէն նպատակի պէս, կ'ենթադրէ միջոցներ. եւ այդ միջոցները բաւական բազմաթիւ են, օրինակ՝ ընտանիք, վարժարան, եկեղեցի, բնութիւն, մամուլ, ընկերութիւն, գեղարուեստ, ազգային աւանդութիւններ, առողջ գաղափարականներ, շարժանկար ևն ևն: Մենք այսօր կ'ուզենք զբաղիլ շարժանկարով միայն:

Շարժանկարի գործածութիւնը, սովորելին քանի մը տարիներու ընթաց-

քին, յաղթական համեմատութիւններու հասած է բազմաթիւ երկիրներու մէջ, նսեմացնելով թատրոններու երբեմնի փառքն ու բախտը: Իսկ խօսուին ու երգեցիկ շարժանկարը օր աւուր ընդարձակելու վրայ է իր աշխարհակալութեան սահմանները: Անիկա այսօր շահագիտական նպաստաւորագոյն ձեռնարկը կը նկատուի Եւրոպայի եւ Ամերիկայի կրեոսներուն կողմէ, իսկ բազմամիլիոն մարդոց, կիներու, պատանիներու, նոյն իսկ մանուկներու համար անդիմադրելի պէտք մը, անհրաժեշտութիւն մը դարձած է՝ գրեթէ սընունդի համահաւասար: Անհաշուելի բազմութիւններ, կարծես թափընթաց գետի մը ամենի հոսանքներէն քշուած, խուռներամ կը դիմեն ու ակնթարթի մը մէջ կ'ողողեն սրահները, վայրկեան առաջ ըմբոշխնելու ինչ որ իրենց կը հրամցուի...

Բայց ի՞նչ կը հրամցուի այս հոծ բազմութիւններուն. ո՞վ լըջօրէն կը հետաքրքրուի այս հարցով. իրենք կը հետաքրքրուին հարցին էութեամբը, կառավարութիւնները ի՞նչ կ'ըսեն, եկեղեցիները եւ ուրիշ հանգամանաւոր մարմինները ի՞նչ կը խորհին... Պէր կ'առաջնորդուի անմեղ մանկերամը... ո՞ր կը խուժէ անփորձ պատանութիւնը... ո՞ր եւ ինչո՞ւ:

Ահազանգ հնչեցնող այս հարցումները ենթադրել տան, թերեւ, թէ այս տողերը գրողը սխերիմ հակառակորդ մըն է սինկնայի: Բայց ոչ: Ուրեմն պաշտպան մը:—Ոչ... եւ այո:

Եւ ո՞ր լըջագլուխ մարդ պիտի գիշանէր շատագոյն հանդիսանալ այս օրուան շարժանկարներուն ցուցադրութեանց մեծագոյն մասին՝ ուր մատաղ երեւակայութիւնները գերազգուցող, ոճրագար բնագոյններ մշակող եւ կեանքի լըջութիւնն ու սրբութիւնը հեզնող տեսարաններ զիրար կը գլեն գլեային

արագաշարժութեամբ մը:

Եւ ո՞ր լըջախոհ մարդ պիտի համարձակէր թշնամական դիրք բռնել հանդէպ այն ժապաւէններուն՝ (Ֆիլմ) ուր գեղեցիկը, պիտանին, հոգեշահը եւ զուարճալին միացած՝ մտաւորական խրախճանքի մը տպաւորութիւնը կը թողուն շնորհքի ծարաւ հոգիներու վրայ:

Ուրեմն սինեման կ'ըլլայ ա՛յն, ինչ որ մարդիկ կ'ընեն զայն յարեւ նման երկաթին՝ որմէ մարդիկ կը յօրինեն մահառիթ վէճքեր ու միանգամայն պիտանի գործիքներ, կամ նման նուագարանին՝ որուն կրնանք արտադրել տալ լըբենի եւ միանգամայն սրբազան երգեր: Իրողութիւն է, ուրեմն, որ կան վնասակար շարժանկարներ, կան նաեւ օգտակար շարժանկարներ:

Վնասակար շարժանկարը ամէն սեռի եւ հասակի մէջ ունի եւ ամէն օր կ'ունենայ անհամար զոհեր: Անոր «շնորհիւ» պատանեկութիւնը դարձած է ապերասան, յանդուգն եւ արկածախնդիր: Գլխաւորաբար Միացեալ Նահանգաց բանտերուն մէջ, այսօր, գող եւ ոճրագործ պատանիներու եւ երիտասարդներու թիւը ահարկու համեմատութիւններու հասած է: Երկու եւրիտասարդութիւնը կեանքի սրբութեան ու լըջութեան կռնակ դարձուցած է: Ընտանեկան խաղաղութիւնը եւ բարքերու աւանդական մաքրութիւնը մազի մը թելէ կախուած՝ փրթիլ կ'ըսպառնայ հեշտախտաւոր տեսարաններու երեսէն: Կեանքը «վայելելու» մարմաջը կը մտրակուի, կը շեշտուի, եւ մարդիկ ու կիները դրամ հայթայթելու համար ո՛րեւէ միջոցի առջեւ չեն ընկրկիր: Որճրագործութիւնը հասարակ արկածախնդրութեան վերածուած է, եւ, կոճկելու համար այս վրդովիչ ցանկը, յարենք նաեւ այն սասանեցուցիչ իրողութիւնը՝ թէ կեանքը սինեմայի եր-

կրպագուներու աչքին իր իմաստը կորսնցուցած՝ ու ի՛նքն ալ դարձած է սինեմա մը...

Օգտակար շարժանկարը ամէն սեռի և հասակի մէջ ունի իր սիրահարները: Անոր շնորհիւ պատանեկութիւնը հլու, կարգապահ և պարտաճանաչ կը դառնայ, իր դպրոցական գանձերու կողքին ամբարհիւով նաեւ սինեմայի ընձեռած խիստ դործնական գիտելիքներն ու պաշարները: Երկսեռ երիտասարդութիւնը հոգեպարար հրճուանք միայն կ'ըզգայ կեանքի տեսարաններու սրբութենէն և մարդօգուտ ծառայութեան առիթներէն: Մշակին աշխատանքին պտուղը, ճակտին քրտինքովը օծուն, առիթ կ'ընծայէ անոր բարձրօրէն գնահատելու բոլոր աշխատող ձեռքերը: Ընտանեկան քաղցրութիւնը կը շեշտուի, և կեանքը կը դառնայ կ'ըլլայ աշխատանքի սուրբ օրէնք և նուիրումի փառապսակ:

Հզօր է շարժանկարին կատարած դերը, ըլլայ վնասակար, ըլլայ օգտակար:

Բայց ո՞ր գտնել օգտակար շարժանկարը:

Նոր սերունդին կրթական հարցին գերազանց փափկութիւնը ընտանեկան ու ընկերային քրիստոնէական մաքուր կեանքին պահանջած նախանձախնդրութիւնը պարտք կը դնեն հետաքրքրուողներու վրայ արմատական ըլլայ այսխնդրոյն մէջ, այսինքն՝ որոշ դիրք մը բռնել սինեմաներու հանդէպ, կըռնակ դարձնելով վնասակար ֆիլմեր ցուցադրողներուն և քաջալերելով օգտակար սինեման. ու եթէ այս վերջինս դեռ գոյութիւն չունի՝ ստեղծել զայն: Ծախքի կարօտ խնդիր մը, - այո՛. բայց ընդունինք որ կ'արժէ, և ձեռնարկը՝ մտաւորական և հոգեկան անկորնչելի օգուտներու կողքին՝ կրնայ նախանձութեան շահեր ապահովել քիչ ասեմէն:

Փաստով խօսած ըլլալու համար կ'ուզենք հոս յիշել թէ՛ Գահիրէի մէջ Ֆլորէնսերը հաստատեցին աղաջին օգտակար սինեման, և փորձէն խրախուսուած՝ քիչ վերջ բացին երկրորդ մը: Այս սինեմաները, տառական իմաստովը կատարեալ բարիք դարձած, կը յայտնաբերեն ժողովրդային լայն խաւերու ըզմանքը՝ մաքուր մթնոլորտի և մտաւորու հոգեկան անխարդախ սնունդի համար: Իբրեկրորդ փաստ՝ կ'արժէ յիշատակել նաեւ Գահիրէի Ամերիկեան Համալսարանին նախաձեռնութեամբ շարաթնեցող ներկայացած ֆիլմը, Բրիտտոսի կեանքէն, «Թագաւոր Թագաւորաց» կոչուած, որ տասնեակ հազարներու անօրինակ խանդավառ ընդունելութեան արժանացաւ:

Եւրոպական պանազան երկիրներու մէջ արգիւնուած է պատանիներու եւ զեռաւոր աղջիկներու մուտքը սինեմաներէ ներս, ի բաց առեալ չաբաթը որոշ օր մը, թէր մասնաւոր խնամքով ընտրուած ֆիլմեր կը ներկայացուին անոնց: Այս խոհական արգելքը արդէն ի՛նքնին շառաչուն փաստ մըն է սինեմաներու ընկալեալ ապականութեան:

Գործնական ըլլալու համար պիտի ուզէինք առաջարկել մեր վարժարանները օժտել մէկմէկ սինեմայի փոքրագիր գործիքներով, և կամ, մասնաւոր համաձայնութեամբ, մի քանի վարժարան միանալով՝ հայթայթէին միջակ մեծութեամբ գործիք մը: Ֆիլմերը կարելի է փոխ առնել մասնաւոր վճարումով: Հակառակ պարագային՝ գոյութիւն ունեցող սինեմայի մը հետ համաձայնի՝ չաբաթը որոշ օր մը՝ հրահանգիչ, բարոյացուցիչ և զեարճալի ֆիլմեր միայն ներկայացնել երկսեռ աշակերտութեան: Այս կերպով սկիզբը դրուած կ'ըլլայ տրպար սինեմայի մը հիմնարկութեան:

Աղեքսանդրիա

Յ. Թ. ԳՍՍԱՆՆ

Ս. ԳՐՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԹԵԼԱԿԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԾՆՆԴՈՅ ԳԻՐՔԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գիրքի մը ռասուլմասիրութեան իբր նմոյշ այս գիրքը ընտրեցի, անոր համար որ Աստուածաշուքի առաջին գիրքըն է ան, և թէ Ս. Գիրքի ռասուլմասիրութեան ռաշադիր մեթոտի մը շահերը ցուցնող լաւ օրինակ մ'է։ Անտարբեր չեմ եւ իրականութեան հանգէպ թէ այս գիրքը շատ մը վիճաբանութեան առարկայ եղած է։ Բայց այդ վիճաբանութիւնը մեր ռասուլմասիրութեան մէկ մասը չի կազմեր։ Այս գիրքը օգտակար կերպով ռասուլմասիրելու համար պէտք չկայ որոշելու ոչ անոր թուականի եւ հեղինակութեան հարցը, ո'չ ալ անոր պատմական ճշգրտութեան և տառացիօրէն գիտական ըլլալու խնդիրը։

Ծննդոց Գիրքին ռասուլմասիրութեան սկսելու համար իմ նախ թելագրութիւնս է գիրքը օկիզբէն մինչև վերջը կարդալ։ Ասիկա կարելի է ընել անըզբաղ օր մը մի քանի ժամեր յատկացնելով անոր. եթէ ասիկա կարելի չէ ամէն օր մեծ մաս մը կարդալ մինչև որ զայն ըմբռնես։ Այս հապճեպ ընթերցումը ընելու ատեն մի քանի նիւթեր պէտք է մտքի մէջ պահուին։

1. Գիրքին մէջ ի՞նչ տեսակ ատաղձ կայ. պատմութիւն, գիտութիւն, ուղղակի կամ առականորէ միջոցաւ բարոյական ռասուլմում, կրօնական և ուրիշ ունէ բանաստեղծութիւն։

2. Գիրքին ընդհանուր տպաւորութիւնը ի՞նչ է ընթերցողին վրայ։ Անոր ընթերցումը հետաքրքրակա՞ն է, բարոյապէս վերացեցի՞չ է, հոգեւորապէս օգտակա՞ր է։

3. Առաջին և երկրորդ հարցումներ

ընդ առաջախաններէն կրնա՞նք հետեւցնել թէ գիրքին ընդհանուր ուղղութիւնը ի՞նչ է։ Թէ ան ծանօթութիւն տալու, վարդապետութիւն սորվեցնելու, բարոյական կանոններ տալու կամ թէ ընթերցողը հոգեւորապէս բարձրացնելու համար գրուած է։

4. Կրնա՞ս գաղափար մը կազմել թէ գրողը ինչ տեսակ մարդ մ'է (ըլլայ Մովսէս կամ իրմէ ետքը եկող խմբագիր մը)։ Ի՞նչ են Անոր մտային կարողութիւնը, բարոյական իտէալները, կրօնական համոզումները, հոգեւոր փորձառութիւնները։

5. Ի՞նչ է կեդրոնական գաղափարը որուն համար գիրքը գրուած կամ այս ատաղձը հաւաքուած է։ Ինչո՞ւ ընտրած է այն իր գիրքը կազմող մասնաւոր պատմութիւնները կամ նիւթերը։

6. Իբր ներշնչեալ գրութիւն մը, իր Աստուծոյ առած պատգամը՝ Երկրէն ինչե՞ր կր բաղկանայ։ Գիրքին մէջ ի՞նչ կայ որ հոն չի պիտի գտնուէր եթէ գրողին սիրտին և միտքին մէջ Աստուծոյ առաջնորդութիւնը չէր ըլլար։

Արագ ընթերցումով մը թերեւս այս հարցումներէն իւրաքանչիւրին մասին մէկ կամ երկու կէտեր կրնաս քաղել։ Բայց ասանցմէ ունէ մէկուն մասին գտած լոյսդ նօթագրէ։

Այս հարցումներէն մի քանիներուն հաւանական պատասխաններ թելագրեմ քանի որ անոնք մեր բոլոր ռասուլմասիրութեան վրայ կ'ազդեն։ Երբորդ հարցումին պատասխանելով ըսեմ թէ գիրքը ծանօթութիւն, մասնաւորապէս կրօնական տեղեկութիւն տալու

համար գրեւած է: Հինգերորդ հարցումին պատասխանելով ըսեմ որ գրողին նպատակն էր պատմել թէ Աստուած ինչպէ՛ս մարդուն կեանքը մտաւ: Վեցերորդին կրնանք պատասխանել ըսելով թէ Աստուած այս գրողը առաջնորդեց՝ շատ մը տարբեր գէպքերու մէջ տեսնելու և արձանագրելու սա իրականութիւնը թէ Աստուած մարդու հետ յարաբերութեան մէջ կը մտնէ:

Աւելի առաջ չգացած կ'ազգիմ հոս կէտ մը յիշել Ս. Գիրքը ուսումնասիրելու մեր նպատակին մասին: Եթէ մեր նպատակն է պարզապէս իւրաքանչիւր պարբերութիւնը գոց սորվիլ, մեթոտը շատ քիչ տարբերութիւն կ'ընէ, բայց եթէ մեր նպատակն է այս գիրքին մէջէն Աստուծոյ մեզի համար իրական և կենսական պատգամը գտնել, այն ատեն մեր միտքերը այս գաղափարին տալ մեծ կարեւորութիւն ունի: Այս գրողը ինչ որ սորվեցաւ և այս գիրքի միջոցաւ ինչ որ մեզի սորվեցնել ջանաց՝ մեր կեանքերուն մէջ իրական կարեւորութիւն մ'ունի: Այդ պարագային մենք պիտի կարող ըլլանք պատմեալած պատմութեան մէջէն գտնել գրողին կենսական փորձառութիւնը և պատգամը: Այս ընելու համար պատրաստ պէտք է ըլլանք կարդալու ճիշդ ինչ որ գիրքը կը պարունակէ, առանց ոեւէ բան զանց ընելու:

Ծննդոցի առաջին երկու գլուխները ըսածիս շատ լաւ մէկ օրինակն են: Այս գլուխներու մէջ եթէ Աստուծոյ պատգամը կը փնտռենք պէտք է յօժարինք անոնց իրական պարունակութիւնը տեսնելու: Այս գլուխներուն մէջ առաջին յայտնի կէտը «սա է որ հոն աշխարհի ստեղծագործութեան երկու որոշ և տարբեր նկարագրութիւնները կան: Առաջին պատմութիւնը կը վերջանայ երկրորդ գլուխին երրորդ համարովը: Երկրորդ պատմութիւնը կ'սկսի չորրորդ

համարով և կը շարունակէ մինչեւ գլուխին վերջը: Այս երկու պատմութիւնները աւագործութեամբ ուսումնասիրէ, նօթագրելով երկու քին նմանութիւններն աւ տարբերութիւնները: Այս տարբերութեանց մէջ նշանագրէ ստեղծագործութեան մէջ գէպքերու շարքը, լեզուին ոճը (առաջին պատմութեան ոճը բանաստեղծական է), Աստուծոյ համար գործածուած անունները, Աստուծոյ մասին և ստեղծագործութեան մէջ Անոր գործերուն մասին ըմբռնումը: Ապա հասարակաց կէտերը գտիր և ջանա սա հարցումներուն պատասխանելու: Սրբազան մատենագիրը ի՞նչ ունէր իր միտքին մէջ երբ այս երկու պատմութիւններն ալ գիրքին մէջ դրաւ: Իր սիրտին և միտքին մէջ ի՞նչ ունէր, զոր ինք խորհեցաւ թէ՛ կրնար այս երկու պատմութիւններով աւելի լաւ հաղորդել քան ոեւէ մէկով միայն: Անիկա այնպիսի պատգամ մըն է որ իբր Աստուծոյ եկած յայտնութիւն մը քեզի համար կենսական արժէք մ'ունի: Գիրքի պատգամին, մարդկային կեանքի մէջ Աստուծոյ մտաւորին, էական մասը կը կազմէ՞ ան:

Շատ մը աւսանողներ կը խորհին թէ մատենագիրը իր առջեւն ունէր երկու աւելի հին գրութիւններ որոնցմէ առաւ արարչագործութեան այս երկու պատմութիւնները: Այսպիսի աւսանողներ փաստեր կը գտնեն Նոնդոց գիրքին մէջ ուրիշ շատ մը հատուածներու այս երկու գրութիւններէ քաղուած ըլլալուն մասին: Այս հին գրութիւնները մասնաւորապէս կարելի է վերարտադրել՝ Ծննդոց գիրքին մէջ պատելով այն հատուածները ուր «Աստուած» անունը գործածուած է ինչպէս առաջին գլուխին մէջ, և այն հատուածները ուր «Եհովա Աստուած» անունը գործածուած է ինչպէս երկրորդ գլուխին մէջ: Ասոնցմէ իւրաքանչիւրը ներշնչեալ գրութիւն

էր, և ի՞նչ էր իր պատգամը:

Այս յօդուածով չենք կրնար խօսիլ գիրքին շատ մը գլուխներուն մասին: Ես պիտի թելադրէի որ ուսանողը մինչև գիրքին վերջը մեծ ուշադրութեամբ շարունակէր ուսումնասիրել նախ՝ թէ իւրաքանչիւրին մասը ճիշդ ի՞նչ կը պարունակէ, և երկրորդ՝ թէ այդ պարունակութիւնը գրողին նպատակին ինչպէ՞ս կը ծառայէ և Աստուծոյ՝ իր պատգամը մեզի կը բերէ:

Մենք Գիրքին է՛ն գեղեցիկ գիծերէն մէկն է անհատական նկարագիրներու պատկերացումը, նոյ, Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Յովսէփ մեր հոս հանդիպած անուններէն և անձնաւորութիւններէն մի քանիներն են միայն: Ասոնցմէ իւրաքանչիւրը մեզի ինչ կը սորվեցնէ: Մանուկ եղած ատենս սա գաղափարը կազմած էի թէ բոլոր այս մարդիկ սուրբեր են, և ես նեղութիւն կը քաշէի իրենց բոլոր արարքները և նախնական գաղափարները արդարացնելու համար: Բայց հիմա այս կեանքերու մասին շատ տարբեր գաղափար ունիմ: Ասոնք օրինակներ են ցուցնելու թէ այդ տգիտութեան, խաւարի և չարիքի դարուն մէջ մարդիկ ինչպէ՞ս զԱստուծոյ գիտնալու և Անոր հնազանդելու սկսան: Անշուշտ ասիկա կատարեալ ձևով չէր և ոչ ալ բոլորը մէկէն եղաւ: Հրաշքը սա էր թէ անոնք ըլլայ քիչ մը զԱստուծոյ գիտնալ և սիրել սկսան: Եւ մեր մատենագիրը անա այս կը ցուցնէ մեզի:

Իբր օրինակ առ Աբրահամի պատմութիւնը: Աբրահամ Աստուծոյ Բաբկամը կոչուած է: Պատմութեան մէջ հետեւէ անոր տարբեր քայլերուն. 1. Աստուծոյ գիտնալ, 2. Անոր հնազանդիլ, 3. զԱյն սիրել: Մասնաւորապէս ուսումնասիրէ Աբրահամի անյաջողութիւններն ու մեղքերը, և տես թէ ասոնք եւս զինքը ինչպէ՞ս զէպա-

ռաջ առաջնորդեցին:

Իբր օրինակ ա՛ռ նաև Յակոբի պատմութիւնը: Զջմարիտ քրիստոնէական նկարագրի տեսակէտէն Յակոբ մեզի ըսելիք քիչ բան ունի: Բայց զայն ուսումնասիրէ իր ժամանակին մէջ իբր առաջին օրինակներէն մէկը ցուցնելու թէ Աստուծոյ ինչպէ՞ս մարդկային կեանքը կը մտնէ իր դժուար ընտանեկան փոխյարաբերութիւններուն մէջ:

Այս նշանաւոր գիրքին մէջ եղող ուրիշ միայն մէկ տարր եւս կ'ուզեմ յիշել: Այնպիսի մասեր կան որոնք կարծես պարզապէս և անասելիօրէն գէշ բաներու մասին կը խօսին: Ինչո՞ւ գրողը պատմած է ասոնք: Ասոնցմէ ոմանք իրապէս գէշ ազդեցութիւն մ'ունենալ կը թուին: Կը կարծեմ թէ այս զէպքերը միայն օգտակար կերպով կրնան ուսումնասիրուիլ՝ եթէ ըմբռնենք որ անոնք մեզի կը ցուցնեն առանց Աստուծոյ մարդու մը պատկերը: Կեանքերու սքանչելիքը կրնանք հասկնալ այն ատեն՝ երբ զանոնք նկատենք իբր այդ խաւար դարու մէջ զԱստուծոյ ճանչնալ սկսող անհատներ: Զ. Զ. ԹԻԿՁ

Բան մը ստանալ պատասխանատու ըլլալ կ'ենթադրէ: Մենք լուսաւորուած ենք որ լոյս տանք: Տէրոջը փառքը կը տեսնենք որպէս զի զայն ցոլացունենք: Մենք դարձի եկած ենք որ դարձի բերենք՝ մեր պայքարի իբր գէնք գործածելով մեր փորձառութիւնը... Մենք աշխարհի մէջ ենք օ՛չ անոր հետեւելու: Ոչ ալ անոր հետ հաշտ ապրելու համար, այլ անոր փրկութեան օգնելու համար: Եկեղեցին աշխարհի պէտքէ ցուցնէ թէ մարդիկ իրարու հետ ինչպէ՞ս պիտի ապրին... Այն եկեղեցին որ իր կեանքը կը սիրէ զայն կը կորսնցնէ:

ՏՐ. ՉԱՐԼԸՍ Ր. ՊՐԱԽՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՕՐՈՎ, ԿԻԼԻԿԻԱ

(Շարունակութիւն ճախորդ թիւին եւ վերջ)

Բայց Սարգոնի եօթներորդ տարին (ն. Ք. 714) Միտա տակաւին իր ձեռքը կը պահէր Կուէի երկրին արեմտեան հիւսիսային մասերը Կիլիկեան Դրոսնք անուն Տաւրոսի մեծ կիրճին հետ միասին: Մուշկիներն այդ տարին մեծ կոտորած մը տուին Կուէի մարդոց: (Կուէի թագաւոր չի յիշուիր): Ուրիշն դարձեալ յաղթական արշաւանք մըն էր Միտայի ըրածը, որ կրնար մեծամեծ վրտանգներ սպառնալ Ասորեստանի պետութեան: Վասնորոյ Սարգոն ստիպւեցաւ իր գործակալներուն ձգել արեւելքի մէջ մեծ պատերազմին գործը եւ անձամբ Կիլիկիա գալ, որ նորէն ջախջախեց Միտայի զօրութիւնը և զանի ետ մղեց: Եետոյ բուն Մուշկիի երկիրն ալ արշաւելով՝ երկրորդ հարձակում մը տուաւ անոր բանակին: Այնուհետեւ Կուէի երկիրը (Դաշտային Կիլիկիան) վերածեց Ասորեստանեայց նահանգի մը և գրաւ կուսակալի մը ներքեւ, որ հարկաւ Տարսոն կը նստէր: Սարգոն ետ կորզեց աւելի քան ամրացուցնաւ Հարրուս (այժ Ուլադըշլա) և Ուշնանի (այժ ըմ Պօլանթի) բերդաքաղաքները, որոնք Կիլիկեան Դուները կը պահպանէին և զորոնք Միտա երկար ատենէ ի վեր բռնազրաւած էր: Ասկէ զատ, Ապառաժաւ Կիլիկիայ և Կիպրոսի ծովէվերքները հաստատուած Յաւնիացեաց վրայ ալ, որոնք Միտայի հետ զինակցութեամբ երկար ատենէ ի վեր Կուէի երկիրը և Փիւնիկէի ծովէվերեայ քաղաքները հարուածեր էին, իր զօրապետներէն մին զըվեց՝ անշուշտ Տիւրական

նաւատարմիղով մը, որ ծովահէնները յաղթահարեց ու անգորրորութիւն բերաւ Կուէի երկրին աւ Տիւրոս քաղաքին: և

Ամբարիշ, զոր Սարգոն իրեն փեսայացուցած ու Խիլակուռի և Տաբալի թագաւոր կարգած էր, ծագումով Բիս-Բուրուսուսի (կամ Բուրուսասի) երկրէն էր, որ է հաւանօրէն մեր Ուշնիոյ գաւառն, ուր Բերիդ լեռն ու Բերդուս գաւառակը կրնան այդ հին անուան յիշատակը պահած ըլլալ: Սարգոնի ներկայացուցածին համեմատ՝ Ամբարիշ իրաւունք ամբարիշտ մըն էր, որ իր աներոջ ու բարերարին ղէմ պարմանալի ապերախութեամբ մը կ'ապստամբի Ասորեստանին և հիւսիսային դաշնակիցներուն կողմը կը բռնէ, ինք անոնց զեպաններ զըվելով ու զանոնք հրաւիրելով: Բայց աւելի հաւանականը սա է որ Մուշկիի Միտան, Ուրարտուի Ռուսասին դաշնակցութեամբն ու հրաւերովը, դարձեալ արշաւած էր Տաբալի վրայ և սաստիկ ճնշելով Ամբարիշը՝ ստիպած էր իրենց զինակցութեան մէջ մտնել: Սակայն երբ Սարգոն յանկարծ կրկին արեմուտք եկաւ, Միտա, ինչպէս Եգիպտոսը Պաղեստինի մէջ կ'ընէր, մէկէն հետ քաշուեցաւ՝ Ասորեստանի ինքնակալին զայրոյթին նշաւակ թողելով Ամբարիշը: Սարգոն զանի և երկրին աւագանին գերի տարաւ Նինուէ, և Խիլակուռն ու Տաբալի երկրին Ասորեստանեայց նահանգներու վերածեց: Այս դէպքերը կը վերաբերին Սարգոնի Թ. տարւոյն, որ է ն. Ք. 712: Այսպէս Կիլիկիա առժամօր կործնեց իր անկա-

խուժիւնը: Հետեւեալ մի քանի տարիներուն Կիլիկիոյ առընթերական երկիրներն ալ մէկիկ մէկիկ նուաճուելով Ասորեստանի կուսակալութիւններ դարձան: Սարգոն կը ջանար Փոքր Ասիոյ համար գործադրել այն քաղաքական ծրագիրը զոր Թագաւթփալասար Դ. այնչափ յաջողութեամբ գործադրած էր Սիւրիոյ մէջ: 709ին Խիւակկուի եւ Կուէի կուսակալը վճռական յաղթութիւն մը չահեցաւ Մուշկիի թագաւոր Միտայի վրայ, որ վերջապէս ստիպուեցաւ Ասորեստանի հետ հաշտութիւն կնքել՝ Նինուէի ինքնակալին հարկ տալ խոստանալով:

Բայց մինչ մէկ կողմէն հին կոճղը կը փճանար, անդիէն ուժեղ նոր ընձիւղ կը ծլէր: Ձեռք գիտիւր ճիշդ ինչ պարագաներու բերմամբ, Տաւրոսի ձորերուն մէջ Կիլիկեան ցեղերը յանկարծ զօրացան եւ իրենց անտառու լեռներուն ապահինած՝ բոլոր լեռնազաւառն ապստամբեցին: Գուցէ անոնց ղերդամար էր որ 706ին Տաւալու երկիրն ալ ապստամբեցաւ, թէև Սենաֆեիմ, իբրեւ իր հօրը Սարգոնի փոխանորդ, չուտ մը մարեց ապստամբութիւնը եւ երկիրը վերստին խաղաղեցուց: Սակայն 697ին Խիւակկու եւ Տաւալ նորէն ապստամբեցան Տիւլ-Գարէմէի (Թոգարմայի կամ Կիւրիւնի) հետ դաշնակցութեամբ, եւ Կիլիկիոյ ծովեզերքի յունական գաղութներն ալ ակսան ծովահէններով ապստակել Ասորեստանի հաւատարիմ մնացող դաշտային քաղաքները: Սենաքերիմ նախ նուաճեց Տաւալն ու Տիւլ-Գարիմէն եւ ապա Տաւրոսի կիրճերէն իջնելով՝ Կուէի դաշտին վրայ ջախջախեց Յոյները եւ անոնց մէկ նաւատորմիդ փճացուց Սարոս գետին բերանը: Յետոյ Տարոսն եւ Անքիալէ քաղաքներն ամրացուց որ Կուէի սահմանազուխը պաշտպանեն Փօքր Ասիոյ ցեղերուն դէմ:

Սենաքերիմի վերջին տարիներուն դարձեալ ոտք ելան Խիւակկու եւ Տաւալ, զօրոնք հնազանդութեան բերելու համար արշաւեց Ասարհադդոն որդին: Սակայն կ'երեւի թէ Ասարհադդոն չկրցաւ այն ատեն նուաճել ապստամբները եւ ստիպուեցաւ Խանիգալբադ (Մելիտինէ) քաշուիլ: Որովհետեւ իր երկու եղբայրները իր բացակայութենէն առիթ գտնելով՝ սպաննեցին իրենց Սենաքերիմ հայրը (681ին) եւ ապա Խանիգալբադ խաղացին Ասարհադդոնի դէմ: Բայց Ասարհադդոն իր հայրասպան եղբայրներուն յաղթելէ վերջն ալ տակաւին նրկար ատեն ստիպուած էր զբաղիլ իր պետութեան ներքին գործերը կարգադրելու: Այսպէս Ասորեստան հարկադրեալ թոյլ տուաւ որ Խիւակկու եւ Տաւալ նորէն բնիկ թագաւորութեանց վիճակ ստանան:

Նախ 678ին Կապադովկիոյ մէջ Կիմֆերեան Տիուշպայի վրայ յաղթանակ տանելէն վերջն էր որ Ասարհադդոն պատեհութիւն գտաւ Կիլիկիա արշաւելու: Խիւակկու երկիրը եւ Տաւալի երկրին անոր անմիջապէս հարեան անտառապատ լեռներուն մէջ (այսինքն արդի Շիվիլիի շրջանակը) բնակող Դուհուացիներն առպատակեց, 21 աւաններ ու բազմաթիւ շրջակայ գիւղեր քանդեց. բայց կը թուի թէ վերջապէս օգտակար համարեցաւ բնիկներուն հետ հաշտութիւն կնքել՝ հարկատուութեան խոստում միայն առնելով անոնցմէ:

672ին Խիւակկուի թագաւորը՝ Տաւալու Իշկալլա եւ Մելիտինէի Մուգալլու թագաւորներուն եւ Կուզզուրակաց ցեղին հետ միաբանած, ոտք ելաւ Ասորեստանի դէմ, եւ կ'ապառնային ամբողջ Կուէ նահանգը կոխան ընել Անտիտաւրոսի լեռնաշղթայի ոտքին տակ: Ուստի Ասորեստանցիք զօրք համախմբեցին Տաւրոսի հարաւային հովիտներուն մէջ. եւ Մուգալլու հաղիւ թէ այս զօր-

ծողութեանց լուրն առաւ, ինքզինքը փակեց իր ամրոցներէն մէկուն մէջ: Իսկ Խիլակկուներուն ղէմ Ասարհադդոն յունական վարձկաններ գործածելով՝ զանոնք ստորին Կիլիկիոյ դաշտավայրէն դուրս վտարեց: Սակայն կը թուի թէ այս միջոցին նոյն իսկ Կուէ իր անկախութիւնն յայտարարեց բնիկ իշխանի մը ներքեւ:

Սիդոնի թագաւորը, որ Ասորեսդանի ղէմ ապստամբած էր, խորհեցաւ իր զիջքը զօրացնել՝ ապահովելով օգնութիւնը Սանդուարի անուն իշխանի մը, որ տէրն էր Կունդու և Սիզու անուն երկու ամրոցներու: Բայց այս զինակցութիւնը չօգտեց զինք զերծ պահելու Ասարհադդոնի վրէժին դրութենէն կարճ ժամանակ ետքը Սանդուարի ինքն ալ ինկաւ թշնամւոյն ձեռքը: Արդ, Կունդու Ատրաբոնի յիշած միեւնոյն Կուլնդա ամրոցը կ'երեւի՝ Անքիւլէի (Մէրսինի) հիւսիս-արեւելեան կողմը, իսկ Սիզու ամրոցն ալ չենք վարանիր հանրածանօթ Սիս բերդաքաղաքին հետ նոյնացնելու: Սանդու կամ Սանդուն ալ նշանաւոր աստուածութիւն մըն էր՝ Կիլիկիոյ ու յատկապէս Տարսուսի մէջ պաշտուած: Հետեւաբար Սանդուարի Կուէի կամ դաշտային Կիլիկիոյ իշխան մը հղած պիտի ըլլայ:

Մի քանի տարի յետոյ (թերեւս 667-ին) կը յիշուի Խիլակկու ուրիշ արքայ մը, Սանդասարի անուն (ըստ Ենսէնի ստուգաբանութեան՝ Շանքազարի): Սա և Միլիդի Մուգալլուն, որ այդ միջոցին Տաքալի թագաւորութիւնն ալ գրաւած էր, միաժամանակ հպատակութիւն առաջարկեցին Նինուէի Ասուրքանիպալ թագաւորին՝ գուցէ իրենց ետեւէն կոխող Կիւմերեանց ճնշումէն ստիպուած որոնք արդէն 676-ին տապալած էին Փըուիւզիոյ հին ու հզօր թագաւորութիւնը և այս ատեններս այնչափ սպառնալից զիջք բռնած էին Փոքր Ասիոյ իշխա-

նութիւններուն ղէմ, որ հեռաւոր Լիւդիոյ Գիւզկս թագաւորն անգամ անոնց յարձակումէն զարհուրելով, փութաց (664-ին) ինքզինք Ասորեստանի պաշտպանութեան տակ զնել, թէեւ անօգուտ կերպով:

Կիլիկիոյ մէջ իրաց այս վիճակը զըրեթէ անփոփոխ տեսեց 20 տարի մինչև Ն. Ք. 645-ի ատենները, երբ Կիւմերեանց առաջնորդը Տուգսամի կամ Լիւզսամիս ձգեց ա'լ աւերակ դարձուցած Լիւդիան և իր խուժաններուն հետ արեւելք դիմեց, որոշած ըլլալով այսուհետեւ իր աւերիչ հրոսակութիւնները Կիլիկիոյ ու Եփրատացւոց նահանգներուն վրայ ալ փորձել: Լիկայոնիան ու Տիւանիտիսն ալ քերելէ գերթելէ ետքը՝ մտաւ Տաւրոսի կիրճերուն մէջ, բայց հոն իրենէն խիստ դժբաղանց Ասորեստանի զօրքերու հանդիպեցաւ, և անոնց ղէմ պատերազմի մէջ ինկաւ: Որդին Սանդախաւսրա Ասորեստանեայց հետ թշնամութիւնը շարունակեց ատեն մըն ալ, բայց վերջապէս ստիպուեցաւ այս ընդհարումներէն ողջ մնացող Կիւմերեանները ետ տանիլ թերակղզիին կեդրոնը, Մաթաքի կողմերը:

Կիւմերեանց այս վերադարձ յորձանքը թէեւ ատեն մը ճնշեց Խիլակկուն, բայց կ'երեւի թէ այդ արհաւիրքներուն անցնելէն ետքը նորէն զօրացաւ Կիլիկիան թագաւորութիւնը: Կիւմերեան արշաւանքները մինչև անգամ անուղղակի օգուտ մըն ալ ունեցան՝ կոտրելով Խետացւոց վերջին ուժերը, ինչպէս նաև Մուշկիներուն և Տաքալլիներուն, որոնք կրնային մրցիլ Խիլակկուններուն հետ: Որով 640-625 թուականներուն Կիլիկիան վերակազմեալ թագաւորութիւնը պատեհութիւն ունեցաւ Կիւմերեանց իրենց ետեւ աւերակ թողած պաւռններուն վրայ իր իշխանութիւնը տարածել ղէպի Ալիւս գետը: Ապա Ն. Ք. 625-էն ետքը, Ասորեստանի անկեալ

ԲԺՇԱԿԱՆ

ԽԼԻՐԴ (CANCER)

Ուռեցքը մէկ բջիջով կ'սկսի և առանց կենալու շարունակ կը մեծնայ: Բուն ուռեցքը կամ անոր հիւսուածքը տեւէ պաշտօն մը չունի, քնդհակառակը մարմնոյն միւս ոյժերը իրեն կը ծառայեցնէ որպէս մակարոյծ:

Ուռեցքներ կը գտնուին բոյսի, կենդանիի և մարդու մէջ: Ուռեցքի դէմ յաղթելու գաղտնիքը թերեւս մարմին և բժշկական գիտութիւնէ դուրս աղբիւրէ մը պիտի գայ:

Երբեմն պզտիկներ աճելէ կը դադրին. պատճառը, որովհետեւ մարմնոյն կարգ մը մասերը լաւ չեն գործեր, բնականօրէն չեն: Կրնա՞ն ըսել արդեօք ինչե՞ւ մանկան մը բարձրութիւնն ու մեծութիւնը 10-18 տարիներու մէջ կը դադրի, ա՛լ չի մեծնար, ի՞նչ է ասոր գաղտնիքը: Երբ ասոր գաղտնիքը գիտցուի ուռեցքի մըն ալ աճեցումը կրնայ դադարեցուիլ, առանց վիրաբուժի դա-

վիճակէն օգուտ քաղելով՝ ոչ միայն վերստացաւ իր կատարեալ անկախութիւնը, այլ նաեւ ահագին ծաւալում մ'ունեցաւ զէպի հարաւ մինչև որ հասաւ իջերկրականի ավերը, գրաւելով նախկին Կուէի թագաւորութեան պատկանող գաղտային արգաւանդ մասը, որ այնուհետեւ միշտ և միմիայն Կիլիկիոյ անունով ծանօթ եղած է պատմութեան մէջ: Այսպէս, Կիլիկիոյ, որ մանր մօշնր իշխանութեանց բաժանեալ վիճակով մը մտած էր Ասորեստանեայց գերիշխանութեան ներքեւ, իբրեւ միացեալ ու հըզօր թագաւորութիւն մը դուրս կ'ելլէ անկէ՝ Ն. Բ. 606ի առեկները:

ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ

նակի, Բ. Ճառագայթի և Րատիոյի:

Ուռեցքներու տեսակները շատ են. բայց մեզի պէտք եղածները անփնաս և փնասակար եղողներն են: Անփնաս ուռեցքները չեն աճիր և չեն տարածուիլ, անգամ մը երբ գործողութեամբ հանուին ա՛լ չեն բուսնիր: Իսկ եթէ չհանուին կրնան մեծնալով ճնշել կարգ մը կենսական գործարաններու վրայ:

Խլիրդ (Cancer)ը փնասակար տեսակըն է որմէ ամէն մարդ կը սոսկայ:

Վնասակար ուռեցքները ոչ միայն իրենց աճած տեղի մասերը կը քանդեն՝ այլ աւելային անօթներու միջոցաւ իրենց աճող մանր մասերը կը շրջեն, եւ արեան շրջանի միջոցաւ ուրիշ գործարաններու մէջն ալ կ'սկսի ախտը:

Խլիրդը միջին և վերջին տարիներու մէջ կ'սկսի քնդհանրապէս: Կրնայ նաեւ երիտասարդական տարիներու մէջ ալ պատահիլ, և մանկութեան մէջ՝ քանի որ աճեցումը արագ կ'ըլլայ՝ աւելի եւս մեծ աւեր կը գործէ: Կիներու մէջ աւելի յաճախադէպ է քան մարդոց մէջ:

Խլիրդը փոխանցիկ չէ, մանրէներ չեն անոր պատճառը, թոքախտի կամ թոքատապի մանրէներու նման ալ չեն անոր պատճառ եղող ազդակները:

Երբեք տեսնուած չէ որ օր մը բժիշկ մը կամ հիւանդապահուհի մը վարակուած ըլլայ խլիրդէ տառապող հիւանդէ մը:

Դիտումնաւոր կերպով վարակումներով իսկ բժիշկներ չեն կրցած խլիրդէն վարակուիլ: Հասարակութեան մէջ համոզում մը կայ թէ փնասուելով մէկը կրնայ վարակուիլ խլիրդով. բայց պէտք է գիտցուի թէ մարդ մը մէկ կամ

աւելի անգամներ փնտրուելով քանսէր չի կրնար ունենալ:

Բ. Ճառագայթով գրադողներ անդիտակցաբար երբ կրկին և կրկին վերքեր ունեցան Բէօնդկէնի ճառագայթներով խլիրդ ունեցողներ եղան: Կարգ մը ներկեր տեսակ մը փնտրուեցին կրնան յառաջ բերել: Ներկի գործարաններու մէջ աշխատողներ կրնան միզափամփուռ խլիրդ ունենալ: Արեւելքի մէջ թըմբոյ ծամողներ (Արեւելեան Հնդկաստանի յատուկ տեսակ մը ձիւթ) բերանին մէջ խլիրդ կ'ունենան: Կենդանիներու մէջ արեւնատական խլիրդ կրնայ յառաջ բերել մարդ մը, կրկին և կրկին գրգռիչ նիւթեր ներարկելով և կամ մորթին վրայ կրկին և կրկին խայծղան (գաթըրան (քսելով: Յայտնի է թէ գրգռիչ նիւթեր մեծ գեր կը խաղան խլիրդի մէջ: Բրանիկ գրգռումներ (պէտք չէ հասկնալ արտաքին միջոցներով ստացուած վերքեր), մանրէներ կամ մակաբույծներ կրնան պատճառ ըլլալ խլիրդի:

Իւրաքանչիւր ուռեցք կամ քանսէր՝ մէկ բլիթով կ'ուկտի և մասնաւոր վայրի մը վրայ ծանր կ'ընթանայ: Այս վիճակին վեջ ուռեցքը հանուելով հիւանդը կ'աւտեղապես կը բռնուի: Երբ այնքան կը յառաջանայ որ դանակով կարելի չըլլար զայն վտարիլ՝ առանց փնտսելու կենսական գործարանի մը, այն ատեն դիմում կ'ըլլայ այլ միջոցներու, ինչպէս Բ. Ճառագայթի և Բատիոյի, որոնք կ'ուշացնեն աճեցումը: Ամերիկայի մէջ տարին 100 հազար մարդ կը մեռնի խլիրդէն: Հագարաւորներ որոնք բժախնդրութեամբ, աչքի չզարնող, անկարելորդ նկատուած ուռեցքները իրենց մարմնոյն վրայէն հանել տուած են, անկասկած բռնուած են, որոնք թողուելով կրնային խլիրդի փոխուիլ օր մը: Ուրեմն երբ չընտանքի, երեսի վրայ և մարմնոյն այլ և այլ կողմերը փոքրիկ ուռեցք և ճեղքեր երկար

ժամանակ կը մնան եւ չեն անցնիր, պէտք է զարծողութեան ենթարկուիլ անմիջապէս: Այս շատ կարեւոր է: Պէտք է չաւ ընթրուեն թէ քանսէրը իր նախնական վիճակին մէջ 100 առ հարիւր բռնուի: Գրեթէ մարդ մը չի լսեր որ մէկը «քանսէր» է ազատած է, քանզի երբ բժիշկը կը կտրէ, կ'այրէ և գործողութեամբ կը վտարէ նորաբողբոջ քանսէրը, դուրսը կ'ըսեն թէ աննշան ելունդ, պիտակ, կոծիծ կամ նիշ (պէնկ) մը հանեց բժիշկը:

Ընթերցողները մեծ ծառայութիւն մը ըրած կ'ըլլան մարդկութեան, եթէ սորվեցնեն այս կարեւոր դասը իրենց բարեկամ, ծանօթ կամ ազգականներուն:

Երբ գիտութիւնը օրին մէկը այսահարկու հիւանդութեան բուժումի գիւտը գտնէ, անթել հեռագրի միջոցաւ ձրի կերպով ամէն անհատի պիտի աւետուի: Քանզի գիտական և բարձր մշակութի տէր մէկը այնքան անխիղճ մէկը չի կրնար ըլլալ որ իր շահախնդրական գծում հաշիւին համար թողու որ մարդիկ անուելիօրէն տանջուելով մեռնին այս ահարկու ախտէն:

(ՏՈՒԹ.) Ա. ԱՊՈՒՀԱՅՍԹԵԱՆ

Եթէ եկեղեցին իր աւետարանչական գործին մէջ պիտի յաջողի աղօթքի աւելի ժամանակ պէտք է տայ, Եկեղեցիի բոլոր պաշտօնեաները, գործիչները անդամները իրենց ոյժը ասոր պէտք է տրամադրեն: Կործը դիւրին չէ: Քարոզ պատրաստել, գործել, ծրագրի շինել, կազմակերպել աւելի դիւրին են քան աղօթելը: Աղօթելը դժուար է: Աստուծոյ խօսքին մէջ ոչ մէկ պարտականութիւն աւելի շեշտուած է քան Անոր հետ տեւական հաղորդակցութիւնը: Եազուր Պէօմէ կ'ըսէ թէ «չիտակ կերպով աղօթել շիտակ և ջերմեանդ գործել է»:

Ճ. ՈՒ. ՔԷՄՓ

ԳԻՏԱԿԱՆ

ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՏԻԵՋԵՐՔԻ ՎՐԱՅ

(Շարունակութիւն եւ վերջ)

Մեր այս պարզած նիւթը աւարտեալու համար աւելարկ մըն ալ նետենք սահարցին վրայ թէ՛ մարդս տակաւին որչափ պիտի կրնայ ապրիլերկրիս վրայ: Մեր կեանքի դոյութիւնը և շարունակութիւնը արեւի կը պարտինք. եթէ ջերմաստիճանը բաւականաչափ բարձրանայ կամ իջնէ այն ատեն մեր գիտցած կեանքը գոյութիւն չի կրնար ունենալ աշխարհի վրայ. այսինքն կամ տաքէն պիտի այրինք և կամ թէ պաղէն պիտի սառնինք: Ֆարէնհայթ զէրոյէ 150 աստիճան վեր տաքին և 100 աստիճան վար պաղին մէջ չենք կրնար ապրիլ:

Միլիոնաւոր տարիներու ընթացքին աշխարհի ջերմաստիճանը գրեթէ նոյնը մնացած է: Ճառագայթումը արեւի զանգուածին սպառումովը եղած է: Ամէնօր 360, 000 միլիոն թօնօ նիւթի զանգուածէն դուրս կուտայ: Այս կը ցուցնէ թէ երկրի շուրջ տարիներու ընթացքին արեւը շատ ուժ կորսնցուցած է: Բայց այս կորուստը մեծ արժէք չի ներկայացներ երբ արեւին աներեւակայելի միծովիւնը նկատի առնենք: Եթէ հինգ միլիոն անգամ հինգ միլիոն տարիներ առաջ արեւը քննած ըլլայինք հիմակուանէն երկու անգամ ծանր պիտի կշռէր, աւելի պայծառ ու տաք եղած պիտի ըլլար:

Նկատի առնենալով արեւուն ճառագայթարձակումը տարուէ տարի նա իւր ծանրութենէն մաս մը կը կորսնցնէ և ձգողական զօրութիւնը տակաւ առ տակաւ կը պակսի, այնպէս որ արեւը ժա-

մանակէ մը վերջ մարած աստղի մը վիճակին պիտի վերածուի: Այսինքն կամաց կամաց աշխարհը արեւէն պիտի հեռանայ և արեւը միլիոնաւոր տարիներ վերջ աստիճանաբար պիտի պաղի: Այս լոկ մէկ բան կը նշանակէ—Մահ: Ինչպէս որ մենք մեր ունէ մէկ գիտցած բանին վրայ վստահ կ'ըլլանք, նոյնպէս գիտուններն ալ վստահ են թէ վերջապէս մեր աշխարհը սառած երկրի մը պիտի վերածուի: Թերեւս այս սարսափելի պատկեր մի քանիներ տոկան և վերապրին, սակայն անոնց յաջորդող սերունդը էաքիմացիներու ցեղին պիտի փոխուի: Ենթադրենք որ այս կերպը կարելի ըլլայ, սակայն վերջապէս անոնք ալ պիտի մեռնին. այնպէս որ կեանքը բոլորովին պիտի աներեւելութանայ աշխարհիս վրայէն:

Ասիկա մթին հեռապատկեր մըն է: Բայց միտեմք մը ռենինք թէ՛ այս բոլոր բաները պատահելու համար միլիոնաւոր տարիներ պէտք են: Ինչպէս որ ըսի մարդս կէտ միլիոն տարիներ ի վեր է որ հոս կը բնակի, տակաւին նոր սկսած է իր կեանքը, տակաւին աներեւակայելի ժամանակ ունինք ամէն տեսակ ծրագրիներ կերտելու:

Արդեօք ի՞նչ տեսակ արարածներ պիտի ըլլանք միլիոն տարի վերջ եթէ հիմակուան զարգացումով յառաջդիմենք. մեր ապագայ վիճակը երեւակայել անկարելի պիտի ըլլայ: Այս զմեզ տարիչ և վերջին հարցումի մը կ'առաջնորդէ, այսինքն, եթէ ունէ արկած մը չը պատահի և մարդկութիւնը զի-

ԱՅԼԵՒԱՅԼ

ԲՐՈՖ. Յ. Թ. ԳԱՅԱԿԱՆ ԵՒ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅ ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

Բրոֆ. Յ. Թ. ԳայաԿան, որ 17 տարիներէ ի վեր Գահիրէ կը գտնուի, իր թիշկներսէն թելադրութեամբը որոշած էր իր դաստիարական եւն զործերը ձգել եւ Աղեքսանդրիա փոխադրուիլ, հանգստանալու համար:

Այս առթիւ Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցին թէյասեղան մը սարքեց ի պատիւ անոր, Ապրիլ 10-ին, կիրակի կէսօրէ վերջ, կեդրոնական Ե. Ք. Ընկ. Կան (Central Y. M. C. A) սրահին մէջ, նախկին ապարանքը հանգուցեալ Նուպար Փաշայի:

տութեան մէջ աւելի ու աւելի արագ յառաջանայ, արդեօք ի՞նչ պիտի ըլլայ մարդկային իմացական ազդեցութիւնը տիեզերքի վրայ: Կրնա՞յ ըլլայ որ ստեղծագործութեան բարձր նպատակը իմացականութիւնն ըլլայ: Արդեօք մարդկային միտքը պիտի կրնա՞յ իշխել համայն տիեզերքին:

Երբ անամպ գիշեր մը դիտենք երկինքը ակնածանքի զգացում մը մեզ կը պատէ, քանզի կը հասկնանք որ մենք կը դիտենք գործունէութեան մէջ գտնուող Հսկայ Մեքենան: Մենք զմեզ կը տեսնենք կայնած աննշան աւազի հատիկի մը չափ փոքր տշխարհի մը վրայ, գիտակից մեր անկարեւորութեան, հասկնալով մեր հաւանական սկզբնաւորութիւնը եւ գիտնալով մեր անխուսափելի վախճանը, մեծապէս զարմանալով եւ հարցնելով թէ ի՞նչ կը նշանակէ այս բոլորը:

Ամֆ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Թէյասեղանի գլուխը նստած էին Բրոֆ. Յ. Թ. ԳայաԿան եւ Վեր. Հ. Յ. Համբարձումեան իրենց աջն աւազելու շունչով մօտաւորապէս 75 հոգի:

Դաշնակի վրայ Տիկ. Մէյալ Գրեգեանի ընկերակցութեամբ ներկաները երգեցին փառաբանութեան երգը, օրմէ վերջը Վեր. Համբարձումեան ներկաները հրաւիրեց մասնակցելու թէյասեղանին. Վեր. Համբարձումեան թէյասեղանէն վերջ հանդէսը բացաւ հետեւեալ խօսքերով:

«Մեծ է այն ազգը որ մեծ մարդեր ունի, բայց աւելի մեծ է այն ազգը որ իր մեծ մարդիկը գնահատել գիտէ: Բրոֆ. ԳայաԿան անմոռանալի եւ թանկագին խօսքեր խօսած է մեր ժողովուրդին, իր ազգեցեալութիւնը շատ մեծ հղած է: Մեր հոգեւոր երգարանին մէջ թէ հղանակով եւ թէ խօսքով լաւագոյն երգերը ընդհանրապէս բրոֆէսորինն են: Կ'ուզենք գնահատել, մեծցնել եւ բարձրացնել զայն, եւ մեր գնահատումը չպիտի վերջացնենք այս թէյասեղանով: Կը մաղթեմք Աստուած իրեն առնուազն 13 տարիներ շնորհէ, որ 80ի հասնի, եւ իր մնացած տարիները ա՛լ աւելի արգիւնաւոր ըլլան»:

Դաշնակի վրայ Տիկ. Լորա Գոնտուրահեանի ընկերակցութեամբ մենեքեցեց Օր. Մարի Իշխանեան:

Պառն ժողովի կողմէ Տիար Ս. Շաքարեան խօսեցաւ ուղերձ մը, որուն խտացումն է հետեւեալը—

«Իսկապէս Բրոֆ. ԳայաԿան մեծ դէմք մէ: Մանուշակի պէս համեստ եւ բուրու մնաւէտ, պատանի հասակէն հո-



գեւոր և ազգային զրականութեան ձեռնարկած է: Պրն. Շաքարեան հետը բերած էր 1884 թ. «Աւետարներ Մանկանց» թիւ մը, որուն մէջ Բրոֆ. ի կողմէ ստորագրուած մէկ յօդուածը ներկաներուն հիացման առարկայ դարձաւ:

Հաւատքով, յոյսով և սիրով լեցուած կրթասիրութեան և ազգասիրութեան տաղանդներով զինուած, հոգիի, մտքի և մարմնի մշակութեան ընդարձակ դաշտերուն մէջ ցանած է իր առողջ սերմերը առատօրէն: Անիկա եղած է լաւատես, իրատես և հեռատես:

Անմեռ հաւատքով իր վերջին պատգամը կուտայ ամէնուն ըսելով — Հայ ազգը պիտի ապրի, քանզի կենսունակ է և քրիստոնէական քաղաքակրթութեամբ զինուած:»

Ապա եկեղեցիին զանազան պաշտօնական մարմինները ներկայացնող անհատներ խօսք առած են: Հայ Աւետ. Տիկնանց Միութեան կողմէ խօսած է Տիկ. Հռիփսիմէ կիւղէլիմեան, գրուածքով այս միութեան գործունէութեան մէջ Բրոֆէսորի թանկագին բաժինը և մայրերու զարգացման տուած կա-

րենորութիւնը, և ի նշան երախտագիտութեան նուիրած է ինքնահոս զըրիչ մը:

«Դաշնակի վրայ Տիկ. Լուսին Կիւղէլիմեանի ընկերակցութեամբ երգչախումբը» երգած է «Հոգեւոր Երգարանէն թիւ 62 ը - Վերն Անսահման Երկնակամար — Բրոֆ: Ի թարգմանութիւններէն մին, որ յաճախ Բողոքականներու շարականը յորջորջուած է:»

Կիրականորեայ Դպրոցի վարչութեան կողմէ խօսած է Օր. Նուրիճա Գպուրեան՝ յայտնելով մանուկներու հանդէպ բրոֆէսորին հետաքրքրութիւնը, անոնց համար ըրած երգի թարգմանութիւնները, և վարժուհիներու ըրած թելադրութիւնները:

Ե. Ք. Զանից ընկերութեան կողմէ խօսած է Տիար Ս. Կիւղէլիմեան մասնաւորապէս շեշտելով թէ Բրոֆէսորը երիտասարդներու բարեկամ եղած է, անոնց վրայ ունենալով ջերմ հաւատք մը, և ինքզինքը նոյնացնելով անոնց հետ, այնպէս որ ան «ներքնապէս երիտասարդացող ծերունի մը» եղած է: Ապա դրուատելով անոր առաքինութիւնները «Իբր հաղուազիւտ օրինակ մը, առաջնորդ մը, ուսուցիչ մը, երիտասարդներու ուղեցոյց մը» վերջացուցած է սա խօսքերով. «Պիտի աշխատինք Աստուծոյ օգնութեամբ և հետեի իր շաւղիներուն:»

Թղթակիցը ապա կը շարունակէ.

Բրոֆ. ի գոհար թարգմանութիւններէն մին եղող «Առ Տէր Կեանքս ըլլայ թող ան» երգը ներկաներու կողմէ երգուելէ վերջը, խօսք առաւ յարգելի Բրոֆ. ը որ յուզուած շեշտերով արտայայտուեցաւ և ըսաւ. —

«Լաւ կ'ըլլայ որ չխօսէի. երկու վայրկեան լռէի և նստէի. բառեր չունիմ զգացումներս յայտնելու. . . : Հոգեկան մեծ սփոփանք մ'ունիմ:

«Յաճախ ինձմէ խնդրած էին լուսա-

նկարա, ոտանաւորներս ևայլն, օրացոյցներու համար, բայց մերժած էի. չեմ սիրեր փառաբանուիլ:

«Կեանքի փիլիսոփայութիւնս եղած է սիրել և ծառայել, և երախտագէտ ըլլալ ինծի ծառայողներուն:

«Այս պատիւին փոքրագոյն մասը ինծի է, մեծը իմ ծնողացս և ինծի ծառայողներուն է: Եղայ ինչ որ Աստուած սահմանեց, եղայ ինչ որ ծնողքս տուին, եղայ ինչ որ ուսուցիչներս տուին:

«Հիմա մտքի հանգստութիւն ունիմ, և պիտի ապրիմ գործելու համար: Ամէն բան ուրիշի համար է. արեւը, ծաղիկը, նմանապէս մարդը: Անկանոն բայերու պէս բացառութիւն չենք կըրնար կազմել:

«Մերք գասակարդի մարդիկ կան. — ա) անոնք որ արժանիքի տէր են և իրենց արժանիքին համահաւասար կը գնահատուին, (բ իրենց արժանիքէն շատ վար կը գնահատուին, թագուն են, դ) իրենց արժանիքէն շատ վեր կը գնահատուին: Ես վերջինին կը պատկանիմ:

«Այս գնահատումները ոչ թէ իմին, այլ ձեր արժանիքը կը ցուցնեն:

«Ես հաւատարիմ եղայ իմ համոզումներուս. և ազգիս սիրոյն համար մինչև իսկ կախաղան յօժարեցայ: Կ'ուզեմ երկտասարդներու հետ գործել, որ եւրկտասարդ մնամ: Անոնք աւելի ճոխ արդիւնք կուտան:

Կեանքին հետ կատակ չըլլար:

Կեանքն ատաղձ մ'է ինքնին ընտիր:

Համոզումս է սա խորին:

Մէկը անկից քնար կը շինէ,

Միւսն ալ շեմեր ախոռին:

«Ձեր ձեռքն է շինել: Միայն կեանքը բանիմը արժեցնենք: Հոգեկան հաճոյք կ'զգանք այնքան որքան կը սիրենք:

«Խոշոր ապագայ կայ այս եկեղեցիին

համար: Կը մաղթեմ որ իր դերին մէջ ըլլայ:

«Հարստութիւն դիզելու երբեք խորհած չեմ, օր մ'ալ անօթի մնացած չեմ: Ես դրամի բեռնակիրը չեմ:

«Ազգի մը մեծութեան չափանիշը անոր մեծերը գնահատելն է: Աստուած հիմա մեր մէջ եղաւ:»

Բրոֆ. Ը իր խօսքը վերջացուց իր շնորհակալութիւնը յայանելով խառն ժողովին, խօսողներուն, երգչախումբին, մեներգողին և կարգադիր յանձնախումբին:

Ժողովուրդը «Տէր ընդ ձեզ» երգը երգելէ վերջը, Վեր. Համբարձումեանի աղօթքով վերջացաւ այս գեղեցիկ, տըպաւորիչ և նեղնչող հանդէս պաշտամունքը, մեծ գոհունակութիւն պատճառելով ամէնուն:

Գահիրէ

Խ. Յ. Կիւլէլիմեան

ԲԱԺԱՆՈՒՄԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Ամերիկացի, Յոյն և Հայ քոյրերու և եղբայրներու զարմանք և ցաւ պատճառեց հրաժարումը Վեր. Սիրական Աղապահանի, մեր սիրելի հովիւին, որ 12 տարի մեր մէջ գործած է սիրով և եռանդով: Խնդիրը շուտով եկեղեցիին ներկայացուեցաւ, և միաձայնութեամբ հրաժարականը մերժուեցաւ: Վեր. Ս. Աղապահանը անձնապէս աեսնելով զայն համոզելու համար ընտրուած մարմինը, բաղկացեալ մէկ Ամերիկացի երեք Հայ, և մէկ Յոյն անդամներէ, անյաջող մնաց իր ջանքերուն մէջ: Մեր հովիւը պատասխանեց թէ Հալէպի էմմանուէլ եկեղեցիէն առած հրաւերը ինք կ'ընդունի որ Աստուծոյ մէկ կողմն է այս դաշտը ձգելով հոն երթալու, ուր աւելի մեծ կարօտութիւն և ծառայելու աւելի մեծ պատեհութիւն կայ, և թէ ինքը այս համո-

զուժին եկած է երկար աղօթքներէ և խորհելէ ետքը: Անշուշտ այսպէս խորհող Տէրոջ ծառայի մը համար է մեր միակ պարտականութիւնն էր գործունէութեան մէջ Տէրոջ առաջնորդութիւնը, օրհնութիւնն ու յաջողութիւնը մաղթել:

Մեր եկեղեցին Ապրիլ 12ին իրիկունը մեզմէ բաժնուող հովիւին և ընտանիքին հանգէպ յարգանքի եւ սիրոյ հաւաքոյթ մը սարքեց, մասնակցութեամբ Ամիրիկացի, Յոյն եւ Հայ բարեկամներու: Միսիոնարութեան կողմէ Տոքթ. Բ. Մաք Բարու, եկեղեցիի հոգաբարձութեան կողմէ ստորագրողս, Հայ Աւետ. համայնքի կողմէ տիար Յովհ. Վահկացի, Յոյն եղբայրներու կողմէ Տիար Հաճի Բիրիաքոս, Ե. Բ. Ջանից ընկերութեան կողմէ Օր. Արփինէ Մուրատեան պատշաճ բառերով գնահատեցին մեր հովիւին երկարատեւ ծառայութիւնը, եւ իրենց անկեղծ ցաւը յայտնեցին մօտալուտ բաժանման համար: Ներկաները մեծարուեցան խմորեղէն և զովացուցիչ օշորակով. ապա Վեր. եւ Տիկ. Ս. Աղպապեան իրենց թանկագին խօսքերով մեզ քաջալերեցին եւ սփոփել ջանացին:

Ապրիլ 28ի իրիկունը մեր հովիւին եւ ընտանիքին ի պատիւ ճաշասեղան մը տրուեցաւ մասնաւոր բարեկամներու մասնակցութեամբ: Գիշերուան մինչեւ ժամը 11.30 շատ հաճելի ժամանակ անցուցինք գեղեցիկ եւ հոգեւոր խօսակցութիւններով:

Մեր հովիւը իր վերջին քարոզը տւաւ Մայիս 1ի կիրակին, բնաբան ունենալով Գործք. 20. 32 համարը. «Եւ հիմա, եղբայրներ, կը յանձնեմ ձեզ Աստուծոյ եւ Անոր շնորհաց խօսքին, որ կարող է շինելու եւ բոլոր սրբուածներուն հետ ձեզի ժառանգութիւն տալու» Թէ՛ հովիւը եւ Թէ՛ ժողովուրդը շատ յուզուած էին եւ իրենց արցունքները չէին կրնար զսպել:

Մեր եկեղեցիէն և մեր Առաքելա-

կան ազգակիցներէն շատ մը բարեկամներ Մայիս 1, կէսօրէն ետքը մեր հովիւին տունը լեցուած էին անոր և իր ընտանիքին հետ վերջին անգամ մ'ալ տեսնուելու համար: Օթոն եկած ճամբորդներուն կ'օպասէր: Վերջապէս Վեր. Աղպապեան կարգաց Հռովմայեցւոց Թուղթին Ը. գլուխը և ներկաները յորդորեց չբաժնուիլ Աստուծոյ սէրէն: Վեր. Աղպապեան աղօթքէն ետքը ամէն մարդու հրաժեշտի ողջոյնը տուաւ, երկու կողմերը իրարմէ բաժնուեցան արցունքով:

Հառնազայէն առած մեր տեղեկութեան համեմատ հոն կատարուած պաշտամունքը եւ հաւաքոյթներն ալ շատ յուզիչ եղած են: Մեծ բազմութիւն մը մեր հովիւն ու իր ընտանիքը շոգեմաղանելու համար Մայիս 9 ին նաւահանգիստ եկած են և բաժանումը շատ սրտաքեկ եղած է:

Թէպէտ բաւական դժուար է ներել Էմմանուէլ եկեղեցիի, որ այս բաժանումի պատճառ եղած էր բայց կ'ուզէնք անոր ներել Գրիստոսի գործին սիրոյն համար, այսուհանդերձ չենք կրնար չխորհիլ Թէ փոխանակ բերդը ներսէն գրաւելու՝ աւելի լաւ ըրած պիտի ըլլային եթէ այս մասին նախ մեր եկեղեցիին և Կիպրոսի միսիոնարութեան յօժարութիւնը խնդրէին: Ընդունելով հանդերձ Թէ մեր հովիւը որքան ալ ազատ ըլլայ իր ընտրութեան մէջ, անկարելի է նաեւ չընդունիլ զինքը մեր եկեղեցիին շղթայող զօրաւոր կապելու գոյութիւնը:

Չենք կրնար երեւակայել Թէ այս կերպով մեզմէ պիտի բաժնուէր Վեր. Ս. Աղպապեան, որ հազիւ երկու տարի առաջ Կիպրոսի միսիոնարութեան նիկոսիոյ և Լառնաքայի եկեղեցիներուն ընդհանուր փափագովը հովիւ ձեռնադրուած էր: Էմմանուէլ եկեղեցիէն խոնարհաբար պիտի խնդրէինք որ մինչև վերջը ջանա-

դիր ըլլայ մեր իրեն յանձնած հովիւին արժանիքը գնահատելու և անոր հռանդը վառ պահելու: Ինչպէս որ Վեր. Աղ-պապեան կը վկայէ, մենք զինքը եփուռ վիճակի հասցուցինք, որմէ խոնարհաբար օգտուել կը յանձնարարենք էմմանուէլ եկեղեցիին:

Մենք պիտի ուրախանանք և պիտի սփոփուինք լսելով մեր սիրելի հովիւին այդ եկեղեցիին մէջ յաջող գործունէութիւնը և այդ տեղի մեծ պէտքը օգտակար կիրպնով գոհացնելը, որուն համար իսկ միշտ պիտի աղօթենք: Վստահ էինք որ ինքն ալ այս եկեղեցիները պիտի չմոռնայ:

Ուրախութեամբ կը յայտնենք թէ Մայիս 14 ին գումարուած միսիոնարական ժողովին մէջ որոշուած է մեր ժողովուրդին համար Հայ գործիչ մը հրաւիրել, և լիազօր իրաւասութիւն տրուած է մեր եկեղեցական հոգաբարձութեան այս մասին պէտք եղած կարգադրութիւններն ու թղթակցութիւնները ընելու համար: Սպասող և աղօթող ենք որ Աստուծոյ շնորհքովը և առաջնորդութեամբը յարմար, գործունէայ հովիւ մը մեզի զրկուի:

Նիկոսիա (Կիպրոս)

20 Մայիս 1932 Ս. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԷՆՔԻ ՄԸ ՆՈՒԻՐՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Յունիս 12ի Կիրակին անմոռանալի թուական մը եղաւ Պէյրութի աւետարանական եկեղեցիներուն համար: Այդ օր բացման և նուիրման հանդէսը կատարուեցաւ Քէմքի եկեղեցիի դպրոցին նուիրուած շէնքին, որ Էջրէֆիյէ թաղը, Մր. Հէնրի Բիկսի կողմէ շինուած է իր հանգուցեալ տիկնոջ՝ Էմմա Պարնել Բիկսի և դուստրը Աննիի յիշատակին: Այս հայակապ և ամրակուռ շէնքը, որ կը պարտւնակէ 6—700 աշակերտներու բաւական սենեակներ, սրահ մը և յարմարութիւններ, Էջրէֆիյէի զառութեամբ, կեդրոնական դիրքի մը վրայ, օժտուած աննման օգով և տեսարանով: Անոր ընդարձակ սրահը թէպէտ դպրոցի ծառայելու նպատակով շինուած է, բայց միևնոյն ատեն եկեղեցական նպատակի ալ շատ լաւ կը ծառայէ և կը բաւէ: Կը կառկած թէ արդեօք ասկէ վայելուէ պիտի կրնա՞ր ըլլայ եթէ եկեղեցական նպատակի համար շինուած ըլլար ան: Քէմքի եկեղեցական պէտքը առայժմ լրովին կը գոհացնէ: Վերջը

երբ պէտք զգացուի եկեղեցական շէնք մ'ալ անոր վրայ կրնայ կառուցուի:

Շիտակը այսպիսի ատեն մը այս երկրին մէջ հրաշքի նման բան մըն է այսպիսի մեծ պէթոն շէնքի մը կառուցումը մէկ տարիէ պակաս ժամանակի միջոցին: Ասոր գաղտնիքը կը գտնուի Մր. Բիկսի անձնութեան ջանքին և իմաստութեան մէջ: Մր. Բիկս ոչ միայն շինութեան համար պէտք եղած մօտ 3000 օսմ. ոսկին տուաւ, այլ միևնոյն ատեն շէնքին գլխաւոր ճարտարապետը, շինութեան վերակացուն, հաշուաւարը, քննիչը, գրեթէ ամէն բանը եղաւ: Քէմքի եկեղեցիին հովիւը, Վեր. Ե. Հատիտեանի, և իր ժողովուրդին ալ այս մասին ծառայութիւնը անուրանալի է: Շէնքը փողոցէն զատող պատը ժողովուրդը շինել տուաւ: Սրահը 16 մէթր լայն, 20 մէթր երկայն և 6.5 մէթր բարձր է:

Մօտ երկու ժամի չափ տեւեց հանդէսը որուն նախագահեց Մր. Բիկս: Եկեղեցիին օգնական հովիւը Վեր. Հա-

սէսեան պարագային յարմար Ս. Գիրքէն կտորներ կարդաց: Վեր. Ե. Հատիտեան նուիրման աղօթքը կատարեց: Բոլոր հանգիստութեան միջոցին եկեղեցիին երգիչ խումբը եւ դպրոցականներ անուշ երգեցողութիւններ ըրին: Մը. Րիկս իր հանգստեան կնոջ էմմա Րիկսի կարճ մէկ կենսագրականը տուաւ, ծանրանալով անոր անձնութեան, կարեւոր, ծառայելու պատրաստ հոգիին վերայ, և ապա յիշեց թէ իր հանգստեան կնոջ և դաստրին յիշատակին շինուած այս շէնքը հիմա պաշտօնապէս կը նշուիրէ, որ կրնայ առ այժմ իբր եկեղեցիի ժողովաստան եւս՝ զործածութիւն մինչեւ երկրորդ յարկի կառուցումը:

Պատ. Յ. Արգարեան դպրոցի վարչութեան կողմէ յայտնեց թէ այս նուէրը շնորհակալութեամբ կ'ընդունին, և խոստացաւ որ շէնքը նախորդներու նըպատակին հաւատարիմ պիտի մնան: Պէյրութի Ա. Աւետ. Եկեղեցիին կողմէ Վեր. Ե. Կէօքկէօկեան խօսելով քրքրեց աւերակ դարձած մեր անթիւ դպրոցներու եւ եկեղեցիներու տխուր յիշատակները և այս շէնքին համար իր շնորհակալութիւնն ու շնորհաւորումները յայտնեց: Պէյրութի Երիցական Եկեղեցիին ընդհանուր քարտուղարը Մը. Նիզու միսիօնարութեան կողմէ մասնաւոր շնորհաւորումները յայտնեց, և ապա ըսաւ թէ այս շէնքին միեւնոյն ատեն թէ՛ դպրոցի և թէ՛ եկեղեցիի նպատակին ծառայելու մեղի կը հասկցնէ կըրթութեան և կրօնքին զուգընթացութիւնը, թէ ինչպէս որ անկրօն կրթութիւն մը կարգ մը անհաւատներ կ'արտադրէ, անուս կրօնասիրութիւնն ալ յաճախ մոլեռանդութեան կ'առաջնորդէ:

Հանդէսը վերջացաւ Վեր. Ե. Հատիտեանի օրհնութեամբը:

Զ. Ա. Պէյքճեօն

ՆՈՐ ՀԱՃԸՆ

Ամերիկաբնակ սրտցաւ Հաճընցիներու սիրտին մէջ իրենց գաղթական հայրենակիցներուն ներկայ վիճակը կարեկցութեան տեւական առարկայ եղած էր: Տէր և Տիկ. Կէրթմէնեան այս վիճակին վերջ մը տալու համար իրենց դրամը չխնայեցին, զոր յանձնեցին ԷՕ ամեայ բայց միտքով և մարմինով տակաւին զօրաւոր իրենդ հօրը, Վեր. Ս. Տէվիրեանի: Սա վերջինը 1930 Սեպ. 30ին այս նպատակով քաղաքս եկաւ յանձն առնելով երկար ճամբորդութեան մը դժուարութիւնները:

Քաղաքը պտըտեցաւ և Լիբանանի մէջ շրջան մը ըրաւ: Վերջապէս մեծն Լիբանանի Լեռնաշղթան Պէյրութի կապող մասը ընտրեց: Իր լիմաստութեան, ջանքին և յարատեւութեան շնորհիւ, շատ յօգնելէ ետքը, 1931 Մարտ 30ին հիմա Նոր Հաճըն կոչուող վայրին կալուածագիրը ստացաւ: Այս գետինը արեւելքէն և արեւմուտքէն 10 մէտր լայն ճամբայով, հիւսիսէն 8 մէտր և հարաւէն 16.5 մէտր լայն հանրակառքի ճամբայով սահմանուած է, և մօտ 36 հազար քառակուսի կանգուն տարածութիւն ունի: Գեղեցիկ օդով և դիրքով օժտուած է, հողը քիչ մը փոքրիկ առատ ջուրի աղբիւրներ կը գտնուին:

Վեր. Տէվիրեան իբր հեռատես անձ նախակրթարան մը և վարձուած գետնի մը վրայ ասոր կից ըլլալով մանկապարտէզ մը շինել տուաւ Կէրթմէնեան Վարժարան անունով, ուր կը յաճախեն հաճընցի և թշ-հաճըցի մօտ 160 երկսեռ աշակերտներ: Ասոնք հինգ կարող վարժուհիներու առաջնորդութեամբ ֆրանսերէն, անգլիերէն, հայերէն լեզուներով դիտական և կրօնական ուսում կ'ընտանան:

Այս գետնին հարաւային կողմը հանրակառքի ճամբային վրայ շինուած 19